ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

30 մարտի 2026 թվականի թիվ 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի ԹԻՎ 95-Ա ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 8-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի 1-ին կետի 2)-րդ և 3)-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը.

որոշում եմ.

1.Ստեղծել աշխատանքային խումբ ՀՀ Տավուշի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմաննուղղված սուբվենցիաների ծրագրերի, ինչպես նաև պետական և այլ ծրագրերի իրականացման աշխատանքների ընթացքի մշտադիտարկման նպատակով /համաձայն հավելվածի/

Աշխատանքային խմբին.

2.Սուբվենցիաների հայտերի փաթեթները ստանալուց հետո ուսումնասիրել ծրագրերի իրականացման իրագործելիության և ֆինանսական ցուցանիշների համապատասխանությունը՝ ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի:

3. Սուբվենցիաների հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո փաթեթները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4.Կատարվող աշխատանքների ընթացքի մշտադիտարկման նպատակով իրականացնել այցելություններ ամիսը 2 անգամ:

5.Սուբվենցիոն և այլ ծրագրերով կատարվող աշխատանքների մասին մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

6.Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգին համապատասխան ապահովել ծրագրերի լուսաբանման գործընթացը:

7.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2025 թվականի մայիսի 12-ի թիվ 95-Ա և 2026 թվականի հունվարի 9-ի թիվ 8-Ա որոշումները:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2026-03-31 14:51:22 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված՝

ՀՀ Տավուշի մարզպետի

30 մարտի 2026 թ" թիվ 59-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Ն"Ղուշչյան - ՀՀ Տավուշի մարզպետի տեղակալ /խմբի ղեկավար/

Մ. Մելքումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման

Գ. Հարությունյան- ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ

Ա. Գալստյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ

Ա. Բաբլումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Ս. Խալաթյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական

Հ. Ղազումյան - ՀՀ Տավուշի մարզպետի օգնական

Ա" Ամիրխանյան- ՀՀ Տավուշի մարզպետի օգնական

Վ. Ղալումյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Վ. Օրդյան - ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Իջևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Դիլիջան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Բերդ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Նոյեմբերյան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/:

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար Ա.Գևորգյան

31.03.2026

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241